

Բյուջեի հարցաթերթիկի ծրագրերի և հապավումների սահմանումներ/բացատրություններ

ԲԴՄՇ-ի հարգելի ընտանիքներ,

Մենք մի քանի հարցումներ ենք ստացել բյուջեի հարցաթերթիկի վերաբերյալ: Մենք հասկանում ենք ձեր մտահոգությունները և վրդովմունքը և ներողության ենք խնդրում շփոթմունք առաջացնելու համար: Ինչպես դուք տեսնում եք, նահանգապետ Նյուսոմի առաջարկած դպրոցի բյուջեի 10% կրճատումը մտահոգիչ է: Խնդրում ենք շարունակել էլեկտրոնային փոստի նամակ ուղարկել նահանգապետ Նյուսոմին <https://govapps.gov.ca.gov/gov40mail/> հասցեով, որպեսզի նա ընդունի օրենսդիր մարմինների ընդունած բյուջեն և մենք ստիպված չլինենք կրճատումներ կատարել:

G.L.A.D. Լեզվի ձեռքբերման ուղղորդված մեթոդ (Guided Language Acquisition Design)

G.L.A.D. նախագիծը կրթական մոտեցում է, որը տարբեր մեթոդներ է ներառում երկլեզու աշակերտներին սովորեցնելու կրթական առարկաները միաժամանակ նաև անգլերեն լեզուն: Այն հիմնված է երկրորդ լեզվի ձեռքբերման հետ կապված հետազոտությունների և պաշտպանված հրահանգների վրա:

Դպրոցական շրջանը մասնագիտական վերապատրաստում է հատկացնում ուսուցիչներին այս նախագծի դասավանդման մեթոդները ձեռքբերելու համար: Կրճատումը կվերացնի մասնագիտական վերապատրաստումը:

P.B.I.S. Դրական վարքի միջամտություն և աջակցություն (Positive Behavioral Interventions and Supports)

PBIS-ը փաստերի վրա հիմնված եռաստիճան բազիս է՝ ամեն օր բարելավելու և ներառելու բոլոր այն տվյալները, համակարգերը և գործնական աշխատանքը, որոնք ազդում են աշակերտի վարքագծի վրա: PBIS-ը դպրոցներ է ստեղծում, որտեղ բոլոր աշակերտները առաջադիմում են, որովհետև դպրոցական համակարգները և պրակտիկան, կանոնավոր, ակտիվ գործողությունների միջոցով կանխում է անցանկալի վարքագիծը: Աշակերտներին սովորեցնում են ընդունելի վարքի ակնկալիքները: Դպրոցները համընդհանուր այս աջակցությունն են հատկացնում բոլոր աշակերտների համար: Ռիսկի տակ գտնվող աշակերտները, որոնք լուրջ խնդիրներ ունեն, վարքը բարելավելու համար ավելի շատ աջակցություն և գնահատում են ստանում 2-րդ և 3-րդ աստիճանի մակարդակներում:

Դպրոցական շրջանը վերապատրաստում է ստանում Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակի կողմից, մանկապարտեզից մինչև 12-րդ դասարաններում PBIS-ն իրականացնելու համար: Կրճատումը կվերացնի այդ աջակցությունը և մենք ինքներս կկատարենք այդ աշխատանքները դպրոցական շրջանի ներսում:

G.A.T.E. Ծնորհալի և տաղանդավոր ուսուցում (Gifted and Talented Education)

4-րդ դասարանից սկսած, Ծնորհալի և տաղանդավոր ուսուցում է հատկացվում որակավորված աշակերտներին: GATE ծրագիրը դասավանդվում է մասնագիտացված ուսուցչի կողմից: Համընդհանուր քննություն կա 3-րդ դասարանում սովորող բոլոր աշակերտների համար: Ծնորհալի և տաղանդավոր ճանաչված բոլոր աշակերտները տեղադրվում են նույն դասարանում կրթական աջակցություն ստանալու համար: Կրճատումը կպահպանի GATE դասընթացները և GATE ծրագրում տեղադրվելու ճանաչման գործընթացը, բայց կկրճատվի շրջանի կողմից ստացված աջակցությունը:

Թիրախային միջամտություն. Բաժիններ միջնակարգ դպրոցի համար (Sections for the Secondary)

Տեղական վերահսկողության հաշվետվողականության ծրագրի (LCAP) լրացուցիչ հիմնադրամը, միջամտության բաժիններ է հատկացրել Բրբենքի միջնակարգ դպրոցի այն աշակերտներին, ովքեր բավարար առաջադիմություն չեն ցուցաբերում կրթական առարկաներում: Միջամտության այս դասընթացները փոխարինում են ընտրովի դասընթացներին, որոնք աշակերտներին լրացուցիչ կրթական աջակցություն են ցույց տալիս, հատկապես անգլերեն լեզվի և մաթեմատիկայի ոլորտում: Այս դասընթացները այլևս չեն գործի:

Դպրոցի ավարտական պահանջներ

Ներկայումս, միջնակարգ դպրոցն ավարտելու համար անհրաժեշտ է 230 կրեդիտ, որից 70-ը ստանում են ընտրովի դասընթացների միջոցով: Մենք ցանկանում ենք կրճատել անհրաժեշտ կրեդիտի քանակը և հասցնել այն 210-ի, որից 50-ը կարելի կլինի ստանալ ընտրովի դասընթացների միջոցով: Այս կրճատումը կհանգեցնի նաև աշխատակազմի կրճատման:

2020 թվականի հունիսի 17-ի կրթական գրասենյակի ժողովի ընթացքում նույնպես կարող եք ծանոթանալ հնարավոր կրճատման ենթարկվելիք պաշտոնների հետ: Սեղմել այս հղումը https://legistarwebproduction.s3.amazonaws.com/uploads/attachment/pdf/618309/06172020_budget_discussion_PP_v3_MH.pdf

Այս ծրագրերի հետ ծանոթանալու համար, խնդրում ենք դիտել 2020 թվականի մայիսի 26-ին կայացած կրթական գրասենյակի ժողովը: Եթե ցանկանում եք դիտել այն, խնդրում ենք սեղմել այս հղումը https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7926

LCAP ծրագիրը նույնպես տեղեկություն է պարունակում <https://www.burbankusd.org/lcap>
